

# Տ Ա Պ.

---

Կենաց բաժակը ցնծուն քու աղբիւրէդ կը յորդի,  
Երիկնային քաղցրազեղ բուրումներով առլըցուն.  
Ու դալարին յամրօրօր մըրափումէն կը սթափի,  
Ցոյզով, հեւքով ու հոյլ հոյլ զերդ հոգիներ սարսուալիր...

Քու անսահման իրապոյրիդ հուրն ու պերճանքն անպահոյն  
Տիեզերքը կը լեցնեն սըրբութիւնով մ'արփենի.  
Ինչպէս այգուն ցոլման տակ կը պսպըղայ լինը մունջ,  
Քու աչերուդ փայլին տակ հոգիս լըսիկ կը փըթքի...

Դիտեմ, տըրոփը սըրտիդ փոթորիկն է ծովերուն,  
Դիտեմ, երկինքը գեղոյդ կամարին վրայ կը հանգչի.  
Այդ ի՞նչ վայիսն է սակայն որ կը յուզէ բընութիւնն  
Որմէ հոգւոյս խորութիւնն ալ մեծախոռով կ'աղմըկի...

Յ.ԶՈՒՐԻԿԵԱՆ

**Փարիզ, 1930**

## ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՅԱՅԱՍԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՄԻՑ

### ԹԱՏՐՈՒ

Ղարաբիլիսայի պետական թատրոնը -  
Հայաստանի կուլտուրական նուաճումներից  
մէկն էլ պիտի համարել Ղարաբիլիսայի հայ  
պետական թատրոնը, որն իր գոյութիւնն սկսել  
է 1931թ. ապրիլ ամսից և համարում է Հա-  
յաստանի երրորդ պետական թատրոնը (Երե-  
ւանի, Լենինկրատի պետական թատրոններից  
յետոյ) :

Առաջին թատրոնական սէզոնում, ապրի-  
լից մինչեւ նոյեմբեր, խումբն ունենալով ոէ-

պերտուարում ընդամենը 7 պիէս, բեմագրել է  
100 անդամ, ոչ միայն Ղարաբիլիսայում, այլ  
և Չորագէսում, Մանեսում, Ալլահվերտիում,  
և անունուած գլուխացն ընմաղրել է «Լեռ», «Յա-  
սում», «Ճեղքուածք», «Մեղիլ», «Կարմիր  
Յանքս», և նույնուած գլուխացն ընմաղրել է «Դիմուածք»:

Ներկայացումների շուրջը հասարակական  
կարծիք ստեղծելու համար կազմակերպուել են  
առանձին պիէսների մասին «դիմուածք»ներ:

Դերասանական խումբը բաղկացած է 17  
հոգուց, որի ճնշող մեծամասնութիւնը բան-